ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԴԱՍԿԱՐ

(առարկա)

ԹԵՄԱ՝ Ուսուցման արդյունավետ մեթոդների,հնարների օգտագործումը մայրենիի դասավանդման ընթացքում/կրտսեր դպրոցում/

Կազմեց՝ Շուշանիկ Գրիգորյան Լեռնիկի

(անուն,ազգանուն,հայրանուն)

Սյունիքի մարզի <<Ջագիկավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

(դպրոցի անվանում)

Ղեկավար՝ Գայանե Ավագյան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն.....2

Ներածություն.....3

ԳԼՈՒԽ1 «ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԹՈԴՆԵՐԻ, ՀՆԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ»

1.1 Ժամանակակից մեթոդների դերը կրտսեր դպրոցում մայրենիի դասավանդման շրջանակներում.....5

1.2 Փորձարարական մաս.....12

Եզրակացություններ.....15

Օգտագործված գրականության ցանկ.....17

Հավելվածներ.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական գործընթացի հաջողությունը մեծապես կապված է ուսուցչի և սովորողի փոխհարաբերություններից, դասի կառուցողանական պլանավորումից, ճիշտ և նպատակային ընտրված մեթոդներից ու ժամանակակից մարտահրավերները հաշվի առնելուց: Անհնար է կատարելագործվել և մեծ առաջընթաց գրանցել ուսուցման գործընթացում, երբ ուսուցչի համար կան անպատասխան հարցեր, երբ սովորողների մասնակցությունը դասին համաչափ չէ, առկա են պասիվ, անտարբեր կամ ուսոմնառության դժվարություններ ունեցող սովորողներ: Հետևաբար կրթական գործընթացում հաջողություններ գրանցելու համար շատ կարևոր է, որ ուսուցիչը կարողանա ցուցաբերել անհատակողմնորոշիչ մոտեցումներ, կարողանա կատարել առաջնային գնահատում, դրա հիմքով բացահայտի սովորողների անհատական կրթական կարիքները, ուսումնառության ընթացքում հանդիպող հնարավոր դժվարությունները, սովորողների օժտվածության մակարդակը: Այստեղ կարևոր բաղադրիչ է նաև ճիշտ կերպով հետադարձ կապ ստեղծելու կարողությունը, արտաքին ու ներքին ինքնանդրադարձի հնարավորության ապահովումը, դասի պլանավորման ժամանակ կիրառի ժամանակակից տեղնոլոգիաներ: Դասավանդման ընթացքում անհատակողմներեշիչ մոտեցումներն իրենց բաղադրամասերով ու գործիքներով թույլ են տալիս, որ ուսուցիչի համար հստակ տեսանելի դառնան սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների պաշարը, ինչպես նաև նա կարողանա վերահսկել վարքային դրսևորումները, սովորողի ռեֆլեքսիան, աշխատունակությունն ու սովորելու մոտիվացիան: Իսկ ահա ուսուցման աշակերտակենտրոն մոտեցումներն էլ ուսուցչին օգնում են դասի ընթացքում ապահովել սեվերեղների համաչափ մասնակցությունը, բարձրացնել վերջիններիս ակտիվությունը, խթանել ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը:

Բնավ չստվերելով դասի պլանավորման ավանդական եղանակները, վստահ ենք, որ նոր մտածողություն և աշխարհայացք ունեցոս սովորողի կրթական կարիքների բավարարման համար ուղղակի անհրաժեշտություն է, որ ուսուցիչը գոնծի կրթական նոր պահանջներին համապատասխան, նախապատվություն տա սովորողների կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասատիպերին:

Թեմայի արդիականությունը : Կրտսեր դպրոցում կարողունակ, ինքնուրույն, նախաձեռնող և նորարար սովորողն կրթելու և դաստիարակելու գործընթացն, անշուշտ, պայմանավորված է կրթական համակարգի արդիականացմամբ, ինչը ենթադրում է ուսումնադաստիարակչական գործընթացում կարևորել ժամանակակից մեթոդների կիրառումը, հարցադրումների, ինքնագնահատման ռուբրիկների, ֆոկուս խմբերի օգտագործումը, գործնական, ինքնուրույն աշխատանքների հաճախակի կազմակերպումն, ինչպես նաև կրտսեր դպրոցականներին նախագծերի ստեղծմանը, հետազոտություններին, բացահայտումներին ուղղորդելը: Հենց վերը նշած հանգամանքներից էլ բխում է սույն հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել կրտսեր դպրոցում մայրենիի դասավանդման շրջանակներում ուսուցչի կողմից կիրառվող մեթոդների, դասը պլանավորելու հմտությունների, անհատակողմնորոշիչ մոտեցումների ազդեցությունը սովորողների անհատական կարիքները, այդ թվում օժտվածությունն ու դժվարությունները բացահայտելու, առաջադիմության, աշխատունակության, սովորելու մոտիվացիայի բարձրացման, վրա:

Հետազոտության խնդիրը:

- մատնանշել սովորողների կրթական կարիքներն ու սահմանել դրանց բացահայտման եղանակները:
- սահմանել այն մոտեցումները, մեթոդներն ու մանկավարժական հնարները, որոնց վրա հիմնվելով, ուսուցիչը կրտսեր դպրոցում կարող է ներդնել անհատակողմներեշիչ մեխանիզմներ, այդ թվում հետադարձ կապ ստեղծել՝ նպատակ ունենալով կառավարելի դաշտում պահել սովորողների գիտելիքների, հմտությունների ու կարողունակությունների ձեռքբերման գործընթացը:
- Բացահայտել կրտսեր դպրոցականի հետաքրքրությունները, կրթական կարիքները բավարարելուն, մոտիվացիան բարձրացնելուն ուղղված ուսուցչի գործողությունները, և ցույց տալ այն եղանակները, որոնց օգնությամբ հնարավոր է ապահովել կրտսեր դպրոցականների առաջադիմության դինամիկան:

ԳԼՈՒԽ 1 «ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԹՈԴՆԵՐԻ, ՀՆԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ»

1.1 Ժամանակակից մեթոդների դերը կրտսեր դպրոցում մայրենիի դասավանդման շրջանակներում

Կրթական համակարգում բարեփոխումները պայմանավորված են կրթության որակի բարձրացմամբ և սովորողների հետաքրքրությունն ու մոտիվացիան դեպի դասն ուղղորդելու նախապայմաններով: Այս համատեքստում անչափ կարևոր են ուսումնական գործընթացում սովորողների դերակատարության ու մասնակցության վերարժևորումը, ուսուցչի կողմից ուսումնառության գործընթացի նպատակային պլանավորումն ու տարվող անհատակողմնորոշիչ բազմաբնույթ աշխատանքները: Այս աշխատանքները համալիր գործողությունների շղթա են, որոնց միջոցով հնարավոր է զգալիորեն օպտիմալացնել ուսուցման գործընթացները՝ բացահայտելով սովորողների ուժեղ և թույլ կողմերը, ներգրավել նրանց դասի մեջ: Կրտսեր դպրոցական տարիքի սովորողները բավականին հետաքրքրասեր են, ակտիվ իրենց գործողությունների մեջ, ուստի և ուսումնառության ընթացքում ուսուցիչը պետք է հաշվի առնի նրանց տարիքային առանձնահատկությունները, հետաքրքրություններն ու նախասիրությունները:

Այս տարիքում ուսումնական գործունեությունը կրտսեր դպրոցականի համար դառնում է առաջնային, այն բավական բարդ գործունեություն է, որը պահանջում է ժամանակ և ջանքեր թե' ուսուցչից, թե' սովորողներից: Ուսումնառության գործընթացի հաջողությունը կրտսեր դպրոցում մեծապես պայմանավորված է նաև սովորողի սովորողի մոտիվացիայից, ուստի և կրտսեր դպրոցականի համար անդադար հարկավոր է առիթ ստեղծել, որպեսզի նա հնարավորություն ունենա անկաշկանդ արտահայտել իր դիրքորոշումը, մտնել քննարկումների մեջ՝ այդպիսով զարգացնելով երկխեսելու, մենախոսելու կարողությունները, պատկերավոր ու համակողմանի մտածելու և ստեղծագործաբար գործելու հնարավորությունները:

«Մայրենի» ուսումնական առարկայի դերն անկյունաքարային նշանակություն ունի կրտսեր դպրոցականի լեզվամտածողության, հաղորդակցական հմտությունների զարգացման և սոցիալականացման համար: Լեզուն մտածողության միջոց է. հայոց լեզու ուսումնասիրելու

ընթացքում պիտի զարգանան սովորողի քննադատաբար և պատկերավոր մտածելու, երևակայություն դրսևորելու, ստեղծարարության, ինչպես նաև բանավոր և գրավոր խոսքով իր մտածումները, անհանգստությունները ձևակերպելու և վերարտադրելու կարողությունը: Այսինքն տարրական դպրոցում մայրենիի ուսումնասիրության հիմնական նպատակը բանավոր և գրավոր խոսք կառուցելու, տեքստ ստեղծելու ուսուցումն է[1]:

Մայրենիի դասերին սովորողի դերը ուսումնական պրոցեսում պետք է լինի հնարավորինս մասնակցային, նա պեռք է անընդհատ լինի գործունեության մեջ, ուստի կարծում ենք, որ դասերի ժամանակ արդյունավետ է ուսուցման ինտերակտիվ համակարգնիր մեթոդներով: Դրանք նպաստում են խոսքային մշակույթի զարգացմաը, ինքնագնահատականի ձևավորմանը, ինչպես նաև սովորողի մոտ վեր են հանում ինքնուրույնությունը, մեծացնում են հետաքրքրությունը առարկայի նկատմամբ: Ինտերակտիվ մեթոդը կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև: Այս հասկացությունը ծագել է անգլերեն «interact», «interփոխադարձ», «act-գործել» բառերից: Ինտերակտիվ ուսուցումը դա երկխոսությամբ ուսուցում է, որի ընթացքում սովորողները համագործակցում են ոչ միայն դասավնդողի, այլև միմյանց հետ: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողը նոր գիտելիքներ փնտրելու իր հանձնարարություններով սովորողներին ուղղորդում է անկախ հետազոտությունների կատարմանը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցչի ֆունկցիաներն են՝

1. Բացատրել սպասվելիք աշխատանքի նպատակը: Դասի սկզբում հայտարարել թեման և քննարկվող հարցերը:
2. Բաժանել սովորողներին խմբերի և տալ հանձնարարություններ:
3. Չթողնել առանց ուշադրության սխալ մեկնաբանությունները, սակայն միևնույն ժամանակ միանգամից չտալ ճիշտ պատասխանը:
4. Հետևել, որ քննադատվի միտքը, կարծիքը, այլ ոչ թե միտքը արտահայտող ուսանողը:
5. Օգնել սովորողներին գալ ընդհանուր եզրահանգման և դասի վերջում անել եզրակացություններ, որոնք ունեն պրակտիկ և ընդհանուր նշանակություն[2]:

Այսպիսով ինտերակտիվ մեթոդների կիրառումը կրտսե դպրոցում կարող է նպաստել, որ սովորողը պասիվ դաշտից դուրս գա, մշտապես ունենա զբաղվածություն, համագործակցիի դասընկերների հետ: Այս մեթոդների կիրառումը դասավանդման ընթացքում մեծապես կօգնի սովորողների սովորել սովորելու կարողունակության ձևավորմանը: Այս կարողության ձևավորումն իրենից ենթադրում է, որ սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի

[1] https://escs.am/files/files/2020-07-17/8e86258106381f2fda04290ffa268a94.pdf «Մայրենի ծրագիր նհանրակրթական դպրոցի 1-6-րդ դասարանների համար»:
[2] http://armedin.am/wp-content/uploads/ «Ակտիվ, ինտերակտիվ ուսուցման մեթոդներ»

տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն[3]:

Պետք է նկատել, որ, որպես կանոն, կրտսեր դպրոցականներն արագ են ընկալում ցանկացած տեղեկատվություն, ուստի անորակ ու սխալ բառամթերքն ու արտահայտչամիջոցները միմյայն բացասական ազդեցություն են ունենալու վերջիններիս՝ նոր ձևավորվող խոսքի վրա: Այս առումով հետաքրքիր միտք է արտահայտում խորհրդային հոգեբան Լև Սեմյոնովիչ Վիգոտսկին. «Ուսուցման գործընթացների ժամանակային հարաբերակցության և դրանց հոգեբանական հիմքերի զարգացման հարցի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ զարգացումը միշտ առաջ է ընթանումուսուցումից: Երեխան ավելի վաղ է տիրապետում որոշակի հմտությունների, քան գիտակցաբար և կամավոր կերպով սովորում է դրանք կիրառել: Զարգացումը տեղի է ունենում այլ տեմպերով, և ունի իր ներքին տրամաբանությունը»[4]:

Այս համատեքստում կարևոր է ընդգծել նաև, որ ուսուցիչն պետք է առավել ուշադիր լինել սովորողների խոսքային կարողության և մտածողության բնականոն զարգացմանը: Բանավոր խոսքի զարգացումը չի կարող առանձնացվել մտավոր զարգացումից: Անընդհատ մտավոր գործունեություն կատարող սովորողի միտքը գնալով ավելի կազմակերպված է դառնում, հետևապես նաև խոսքն է լինում տրամաբանված և իմաստալից: Սահուն խոսքը մտավոր բարձր զարգացման արդյունքն է: Առաջին և երկրորդ դասարաններում մեծ մասամբ պետք է գործադրել ընդարձակ կամ մանրամասն պատմելը, քանի որ այն անհամեմատ ավելի հեշտ է համառոտ պատմելուց: Սակայն աստիճանաբար պետք է սկսել փոխել պատմելու ձևերը, աստիճանաբար ավելացնելով պահանջները:[5] Աներկբա է, որն կրտսեր դպրոցականի ընդհանուր զարգացման և մտավոր դաստիարակության խնդիրների համակարգում առանձնանանում է խոսքի զարգացումը:

Հայտնի է, որ տարրական դասարրաններում ուսուցչի հիմնական գործառույթը կրթելն ու դաստիարակելն է, այլ խոսքով՝ նպաստել, որ սովորողն անցնցում ինտեգրվի

[3] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 ՀՀ Կառավարության որոշում:
[4] Л. С. Выготский «Мышление и речь», Москва 1934, стр 31:
[5] Ա. Տեր-Գրիգորյան, Հայոցլեզվիմեթոդիկա, Երևան, 1980թ., էջ 166

սոցիալական միջավայր, ստանա կրթության պետական չափորոշչով սահմանված հմտություններ, կարողություններ, գիտելիք, ուստի ուսուցիչն իր ողջ մանկավարժական գործունեության ընթացքում պետք է անի առավելագույնը, որպեսզի կարողանա հստակ կերպով իրականացնել կրթելու ու դաստիարակելու իր գործառույթը, և այդ գործառույթը լինի որակապես բարձր, համապատասխանի կրթության բարձր որակի առկա չափանիշներին: Մանկավարժական աշխատողը պարտավոր է նպաստել ուսումնական հաստատությունում սովորողների կողմից հանրակրթական (հիմնական և լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, իրականացնել հանրակրթական ծրագրերը[6]:

Ներկայիս սովորողը ապագա ուսուցիչն է, քաղաքական ու հասարակական գործիչը, լեզվաբանն ու գիտնականը, ուստի աներկբա է, որ հասարակությանն անհրաժեշտ են անհատներ, ովքեր ունակ են սովորել, սովորեցնել, ինքնուրույն լինել անկախ տարիքից, գործողությունների և որոշումների կայացման հարցում ևս պատրաստ լինել: Այս համատեքստում կարելի է պնդել, որ հաջողությունը պայմանավորված ոչ թե գիտելիքի քանակով, այլ դրանք դրսևորելու և օգտագործելու կարողությամբ: Անշուշտ, նախնական հանրակրթության հիմնական խնդիրներից է նաև տարրական դասարանի սովորողի հաղորդակցական մշակույթի զարգացումը: Շեշտը դրվում է աշակերտի անկախության, համագործակցության պատրաստակամության, երկխոսություն վարելու ունակության, ստեղծագործական գործունեության կարողության զարգացման վրա:

Հաղորդակցվելու կարողությունն իրենից ենթադրում է խոսքի գործունեության բոլոր տեսակների տիրապետում, հասակակիցների և մեծահասակների հետ արդյունավետ խոսքի կառուցում, բանավոր և գրավոր խոսքի առանձին ու համադրական կիրառության կարողություն, առաջադրված խնդրի վերաբերյալ տեսակետի ճշգրիտ, ճիշտ, տրամաբանական և արտահայտիչ ներկայացում:Կարևոր է հիշել, որ մյուս բոլոր ուսումնական առարկաների համար հենք են հանդիսանում մայրենի լեզվի ուսուցման ընթացքում ստացած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:Ակտիվ խոսքը հնարավորություն է տալիս, որ սովորողն ավելի արագ զարգացնի կապակցված խոսքը, հղկի, կոկի, գեղեցկացնի այն:

Ինչպես վերը նշել էինք, ուսումնառության ընթացքն արդյունավետ իրագործելու համար ուսուցիչը դիմում է մի շարք մանկավարժամեթոդական հնարների: Նախ և առաջ կցանկանայինք նշել, որ ցանկացած պարագայում ուսուցչի խոսքը պետք է լինի գրագետ,

[6] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 3:

քերականորեն ճիշտ կառուցված, գեղեցիկ շարադրված, քանի որ սա խոսքային մշակույթ ձևավորելու առաջին անմիջական օղակն է, սովորողն ընդօրինակում է առաջին հերթին ուսուցչի խոսքը:Սովորողի խոսքի զարգացման, լեզվական գիտելիքների նպատակային հաղորդման, սովորողի պատկերավոր ու ստեղծագործական մտածողության զարգացման համար շատ կարևոր է նաև զարգացնող խոսքային միջավայրը, որը նրան մղում է ինքնաբուխ, ստեղծագործական գործունեության, ինչի շնորհիվ սովորողը ձեռք է բերում անհատապես զարգանալու հնարավորություն:

Կապակցված խոսքին դրական հատկանիշներ տալու համար հարկ է, որ դրան նախորդած մյուս փուլերը՝ լեզվական հիմնական միավորների ուսուցումը, բառային ֆոնդի հարստացումը, քերականական կառուցվածքի ձևավորումը նույնպես իրականացված լինեն արդյունավետ, քանի որ հենց այս հենքի վրա է, որ սովորողն ունենում է լիարժեք կապակցված խոսք: Այնուամենայնիվ, այս առումով շատ կարևոր է ուսուցչի մոտեցումը, քանի որ նրա մեթոդական զինանոցն ուղղակի կերպով կարող է ազդել սովորողի ակտիվության վրա, դնել նրան շարժման մեջ, ինչն էլ ուղիղ համեմատական է արդյունավետ վերջնարդյունքին:

Անդրադառնանք նաև կրտսեր դպրոցականի պատմելու կարողության ձևավորմանը, որը բարդ գործընթաց է և մայրենիի դասի կարևոր փուլ է հանդիսանում: Պատմելու ընթացքում զարգանում է սովորողի կապակցված խոսքը, ուստի ուսուցիչը պետք է խրախուսի, որ կիրառվի պասիվ բառապաշարի բառամթերքը, արդյունքում՝ խոսքը կլինի պատկերավոր և զերծ մեխանիկական վերարտադրումներից: Կրտսեր դպրցականները պետք է տեղեկացվեն պատմելու համար իրենց տրված պահանջներին: Սակայն մեր դիտարկումները ցույց են տալիս, որ մեր ուսուցիչները այդ հարցը հաճախ անտեսում են: Առաջին հերթին պետք է գնահատվի պատմողի բառապաշարով ներկայացված հեղինակի խոսքը: Սա նշանակում է, որ նյութը չպետք է անգիր վերարտադրվի[7]: Մայրենիի դասին պակաս կարևոր չէ սովորողի ստեղծագործականության զարգացումը: Ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր կրթության գլխավոր նպատակներից մեկն է: Կրտսեր դպրոցական տարիքի սովորողների ստեղծագործական մտածողությունը կարևոր հանգամանք է ժամանակակից աշխարհում նորանոր հաջողություններ ունենալու, առկա խնդիրներին հեշտ լուծումներ տալու, նոր գաղափարներ իրականացնելու հարցում:

Սովորողների բանավոր խոսքը հագեցած դարձնելու, պատմելու տեսակների միջոցով ստեղծագործական մտածողության ձևավորմումն ապահովելու եղանակ է միջարառկայական կապերի ստեղծումը: Ստեղծագործական մտածողությունը լավագույն միջոց է դուրս գալու կաղապարված մտածելակերպից, ընդլայնելու երևակայությունը:

7Ա. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980թ., էջ 161:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաներն ունեն կոնկրետ՝առարկայական մտածողություն.նրանք ավելի դյուրին են ընկալում,հասկանում և յուրացնում այն,ինչ կապված է իրենց կենսափորձի հետ,ինչ տեսել են,զգացել,ըմբռնել և կատարել են:Նրանց մտածողությունը ձևերով,գույներով և ձայներով է: Կրտսեր դպրոցական տարիքը ճանաչողական գործունեության ակտիվացման փուլ է.նրանք սկսում են հետաքրքրվել և իրականացնել մտավոր պարապմունքներ, իրենց ունեցած և նոր յուրացրած գիտելիքները կիրառել նոր պայմաններում, պարզ եզրահանգումներ անել և այլն:[8] Անչափ կարևոր է սովորողին ցանկացած պարագայում զերծ պահել մեխանիկական վերարտադրումից: Հարկավոր է, որ սովորողը խորքային ընկալի գաղափարը, մեկնաբանի խրատական մասը: Այս նպատակին հասնելու համար ուսուցչին օգնության է գալիս կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասատիպերը: Ավանդական դասին կարևորվում է ուսումնական նյութի մեխանիկական վերարտադրությունը՝ առանց գործնական հմտությունների հետ կապակցելու, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասին կարևորվում է բովանդակության խոր ըմբռնումն ու կապակցումը հմտությունների հետ[9]:

Լեզվական և հաղորդակցական կարողություններն անկյունաքարային են ցանկացած գործունեություն ծավալելու ընթացքում: Այս կարողության բնականոն զարգացումով է պայմանավորված նաև հանրակրթական հաստատությունում սովորողի զարգացումն ու մտավոր առաջընթացը, ուստի և ցանկացած ուսումնական գործընթացի անբաժանելի ու փոխկապակցված բաղադրիչը հենց բնականոն զարգացող հաղորդակցումն է: Ուսուցիչը պետք է ամեն կերպ նպաստի այս կարողության զարգացմանը, որը կհամապատասխանի տարիքային առանձնահատկություններին: Երբ ասում ենք «դասի արդյունավետության բարձրացում», ի նկատի ունենք դասի վերջնական արդյունքը, այսինքն՝ թե դասը որքանո՞վ է զարգացրել սովորողների ճանաչողական ակտիվությունն ու ստեղծագործական ընդունակությունները: Այս համատեքստում շատ կարևոր է նաև սովորողի մոտիվացիան, վերջինիս սովորելու, գիտելիք ամբարելու ցանկությունը: Այդուհանդերձ, պետք է նշենք , որ այդ ցանկության առկայության վրա ևս կարելի է ազդել՝ զանազան հնարներով սովորողին խրախուսելով, պասիվ վիճակից ակտիվ դաշտ բերելով:

Ինչպես արդեն նշել էինք, առանձնակի կարևոր է, որ կրտսեր դպրոցականը կարողանա տեսական մտածելակերպը ճիշտ արտապատկերի առօրյա կյանքում: Այսպիսի ուսուցումը կնպաստի, որ սովորողը յուրացնի դասի լեզվական ու քերականական գիտելիքները՝ հաջորդիվ դրանք կիրառության մեջ դնել,ով գործնական, խմբային, հետազոտական աշխատանքների ընթացքում:

---

[8]Ջ. Գյուլամիրյան, Մայրենիիուսուցմանմեթոդիկա, Երևան 2018, էջ 21:

[9] «Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում», ռեսուրսգրքույկ, Երևան, 2020:

Ամբողջացնելով մեր հետազոտությունը՝ կրկին վերահաստատենք մեր այն պնդումը, որ սովորողի առաջադիմության բարձրացումը, ուսումնառությանընթացքում հաջողությունները պահանջում են դասի կառուցվածքի ինստիտուցիթնալ փոփոխություններ, որոնց շնորհիվ սովորողը կտառնա դասապրոցեսի կենտրոնական սուբյեկտը: Հետքրքրասեր, բացահայտող, հետազոտող, ինքնուրույն ու նախաձեռնող սովորողն ունակ է հանսել մեծագույն հաջողությունների, ուստիև ուսուցիչը պետք է գնա նորարարությունների հետևից՝ ապահովել այնպիսի միջավայր, որտեղ սովորողը կարող է անկաշկանդ ինքնադրսևորվել, սովորել, սովորածը կիրառել, պատմել սովորածի մասին, սովորեցնել, եզրահանգումներ ու դատողություններ կատարել: Հարկ է հիշել, որ կյանքի այս շրափուլում ստացած գիտելիքը, հմտությունը, կարողությունը հետագայում դառնալու է հիմք դրանք էլ ավելի ընդլայնելու համար:

1 .2 Փորձարարական մաս

Հետազոտության տեսական մասում թվարկած հմտություններն ու կարողությունները սովորողը ձեռք կբերի այն պարագայում, երբ ուսուցիչը ճիշտ ու կառուցողական է վարում դասը՝ հաշվի են առնված սովորողների անհատական պահանջմունքները, դասը հագեցած է դիդակտիկ նյութերով ու զննական պարագաներով, դասին կիրառվում են մի շարք ակտիվ մեթոդներ, որոնք կարող են ոգևորել սովորողին ու պահել ակտիվ դաշտում:Կներկայացնեք օրվա դասի պլան «մայրենի» ուսումնական առարկայից:

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ՝ ՓՈԽԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՄԲ

Առարկան՝ «Մայրենի»

Դասարանը՝ Չորրորդ

Դասի թեման՝ Պարույր Սևակ, «Քիչ ենք, բայց հայ ենք»

Դասի տիպը՝ Ամփոփման դաս

Դասի նպատակները՝

- Զարգացնել արտահայտիչ արտասանելու, վերլուծելու կարողությունները, խթանել հաղորդակցական հմտությունները, բանակցելու, բանավիճելու կարողությունները:
- Զարգացնել սովորողների ինքնուրույնությունը, ստեղծագործական մտածողությունն ու վերլուծելու հմությունները:
- Զարգացնել սովորողների լեզվամտածողությունն ու խոսքային կարողությունները:
- Ձևավորել արժեքային համակարգ, սերը դեպի հայրենիքը:

Դասի կահավորումը՝ցուցապաստառ, համակարգիչ, քարտեր:

Դասի ընթացքում կիրառվող մեթոդներ և հնարներ՝ Վեննի դիագրամ, ԳՈՒՍ, Տ–ձև աղյուսակ, մտագրոհ:

Դասի ընթացքը

Մտագրոհի միջոցով կպարզենք աշակերտների մտքում առաջացած նախնական գիտելիքները Հայաստանի, հայ ժողովրդի, նրա խորհրդանիշների մասին և սովորողները կգրեն գրատախտակին, ապա Վեննի դիագրամի միջոցով ցույց կտան Հայաստանի ուժեղ և թույլ կողմերը, առավելություններն ու թերությունները: Խմբային քննարկումների միջոցով ուսուցիչը կակտիվացնի դասարանը, սովորողները կպատմեն իրենց նախագիտելիքները Պ. Սևակի մասին, կհիշեն այլ բանաստեղծություններ Հայաստանի մասին:

Ակտիվությունը պահպանելու համար ուսուցիրը կանցկացնի խմբային աշխատանք, դասարանը կբաժանվի 3 խմբի: Առաջադրանքը նպատակ ունի զարգացնել սովորողների ճանաչողությունը: Կհանձնարարվի բնագրից դուրս գրել առարկա, հատկանիշ և գործողություն ցույց տվող բառերը: Արդյունքում՝սովորողները կփնտրոն բնագրում համապատասխան խոսքի մասերն ու կընթերցեն բնագիրը: Կստացվի, որ կզարգանա և' սովորողների քերականական, և' ընթերցելու հմտությունները: Առաջադրանքի ավարտին դուրս գրված բառերը սովորողները կօգտագործեն նախադասությունների մեջ: Բնագրի բուն գաղափարը հասկանալու համար ուսուցիչը կհանձնարարի աշխատանք զույգերով: Սովորողները պետք է ազատ շարադրեն բանաստեղծությունն ու հարց ձևակերպեն հեղինակին: Այսպես թույլ է տրվում, որ սովորողը երևակայի, ստեղծագործի:

Սովորողներից մի քանիսը, իրար հաջորդելով կարտասանեն բանաստեղծությունը, իսկ մնացած սովորողները Տ–ձև աղյուսակուկ կգրառեն հոմանշային և հականշային բառազույգեր: Ուսուցիչը կկիրառի զննական մեթոդ: Սովորողներին կցուցադրվի տեսասահիկ՝ պատրաստված բանաստեղծության գաղափարին համահունչ, իսկ սովորողները պետք է ամեն սահիկից հետո արտասանեն համապատասխան հատվածը:

Սովորողներին օգնելու համար ուսուցիչը գրատախտակին կգրի ուղղորդող հարցեր և կառաջարկի բանաստեղծության շուրջ գրել փոքրիկ նկարագրական տեքստ:

- Ի՞նչ տեսա
- Ի՞նչ զգացի

- Ի՞նչ հասկացար
- Ի՞նչ էր ուզում ինձ ասել բանաստեղծը
- Ո՞րն է իմ Հայաստանը

Հաջորդիվ սովորողները գրատախտակին կգրեն դասից հանված բանալի բառեր, դարձվածքներ և կբացատրեն դրանց նշանակությունը: Դասի կամփոփվի հայտորոշիչ բանավոր հարցմամբ:

Առաջադրանքի օրինակ՝

1. Ո՞վ է Պարույր Սևակը, ի՞նչ գիտես նրա մասին:
2. Ի՞նչ ստեղծագործությունների անվանումներ կարող ես հիշել Հայաստանի մասին:
3. Ո՞րն էր «Քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծության գաղափարը:
4. Սիրու՞մ ես քո Հայրենիքը:

Դասի ավարտին սովորողները կլրացնեն ինքնագնահատման ռուբրիկ

Դասը հետաքրքի՞ր էր քեզ համար:	ԱՅՈ	ՈՉ
Խմբային աշխատանքին ակտիվ մասնակցություն ունեցա՞ր:	ԱՅՈ	ՈՉ
Հայաստանի մասին ի՞նչ նոր բան իմացար		
Կա՞ր մի բան, որ պակասում էր քեզ դասին:		

Կհանձնարարվի տնային առաջադրանք՝ գրել «Հայաստանս» թմայով ստեղծագործական շարադրություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատանքի վերլուծության արդյունքում կատարեցինք մի քանի արձանագրումներ, որոնք կամբողջացնենք, ընդհանրական տեսքի կբերենք ստորև: Եթե մենք նպատակ ենք դնում զարգացնել երեխայի խոսքը, ստեղծագործական ու պատկերավոր մտածողությունը, ինքնուրույնությունը, անհրաժեշտ է հաշվի առնել, որ որոշակի կոնկրետ գոտում նա ունի իր հետաքրքրությունները, առանձնահատկությունները: Կցանկանանք շեշտադրել հենց այս հանգամանքը, որն իրենից ենթադրում է աշակերտակենտրոն ուսուցում: Սովորողի հետ հաշվի նստել, լսել նրա կարծիքը, խրախուսել վերջինիս, ստուգման ընթացքում շեշտադրել ոչ թե սխալ, այլ ճիշտ բաղադրիչը, կարծում ենք, որ նման մոտեցումը սովորողին ու դասարանը կդարձնեն հեշտ կառավարելի, և մանկավարժն անպատճառ կհասնի հաջողության:

Խոսքի զարգացումը անմիջական գործընթաց է, ուստի մանկավարժը պետք է շփման համար ստեղծի հարմարավետ պայմաններ, որպեսզի ամեն կերպ խրախուսվի անհատի գիտակցումը, ինքնուրույնության կարևորությունը աշակերտի մոտ: Անշուշտ, այս ամենից հետո կարելի է վստահաբար նշել, որ գործ կունենանք նախաձեռնող, մտածող, ստեղծագործող և ինքնուրույն դատող անհատի հետ: Եթե ուսուցիչը նպատակ է դրել զարգացնել կրտսեր դպրոցականի խոսքային մշակույթը, ապա հենց վերը թվարկված չափանիշներն են հանդիսանում այդ գործընթացի հաջողության գրավականը:Կարևորագույն բաղադրիչ է նաև բարոյահոգեբանական կայուն մթնոլորտը, ինչը թույլ կտա, որ աշակերտը հնարավորինս արագ ինտեգրվի հասարակություն ու նախաձեռնողի դերում լինի, ցանկանա սովորել ու իր սովորածը կիրառել ուսումնական հաստատությունից դուրս: Այս հարցում պակաս կարևոր չէ սոցիալական միջավայրի՝ այս պարագայում դասարանի ընդհանրական դերը: Չէ՞ որ հենց այստեղ է նա անցկացնում օրվա մեծ մասը:

Կցանկանայինք նշել նաև խոսքային ու լեզվական գիտելիքների զարգացմանը նպաստող հաջորդ բաղադրիչը, այն է՝ զանազան մեթոդների կիրառություն, ակտիվ, գործուն դասեր, խմբային ու գործնական աշխատանքներ, միջառարկայական կապերի ստեղծում: Երկխոսության, մենախոսության, նպատակային զրույցի օգնությամբ ուսուցիչը կարող է խթանել, որ պասիվ բառապաշարից աշակերտը ավելի հաճախ օգտվի և սկսի անկաշկանդ արտահայտել սեփական մտքերը: Մայրենիի դասաժամերին խոսքի զարգացման համար պետք է ստեղծվի հաղորակցության հատուկ իրավիճակ, որտեղ ուսուցիչը պետք է հատուկ խնդիրներ առաջադրի, իսկ սովորողը ազատ և անկաշկանդ մասնակցություն ցուցաբերի այդ իրավիճակներին, որոնց ընթացքում զարգանում է բառապաշարը, մտքի արտահայտման եղանակները, մի խոսքով ստեղծվում է այնպիսի իրավիճակ, որտեղ զարգանում է կրտսեր դպրոցականի խոսքը:

Կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի զարգացումը դիտարկվում է հասակակիցների և մեծահասակների հետ նպատակային շփման համատեքստում: Եվ որքան շատ լինի շփումը հասակակիցների և մեծահասկների հետ, այնքան վերջինս սովորելու և վերցնելու նյութ կունենա: Սակայն պետք է հիշել,որ սովորողի խոսքը պետք է կառուցված լինի ճիշտ, իսկ ճիշտ և գրագետ խոսք երեխաները լսում և սովորում են սոցիալական միջավայրում, քանի որ խոսքն ամենից առաջ զարգանում է շրջապատի հետ հաղորդակցման ընթացքում: Ուստի հարկ է ևս մեկ անգամ նշել, որ կարևոր է շրջապատող մարդկանց գրագետ, ճիշտ խոսքը: Նախքան աշակերտի հետ զրույցի և երկխոսության մեջ մտնելը, ուսուցիչը պետք է նրանց մեջ ձևավորի լսելու կարողություն, քանի որ սա զարգացվածության չափանիշ է. հնարավոր է երեխան ունենա շատ լավ խոսք, սակայն լսելու կարողությունը բացակայի նրա մոտ: Ուստի մենք՝ մանկավարժներս, պարտավոր ենք երեխաների համար ստեղծել այնպիսի միջավայր, որ նրանց խոսքը զարգանա ճիշտ և գրագետ և ցանկացած պահի ուղղորդենք նրանց սիրել և պահպանել մայրենի լեզուն:

Այսքանով հանդերձ՝ կարող ենք արձանագրել, որ կրտսեր դպրոցական տարիքը խոսքային մշակույթի զարգացման, լեզվական գիտելիքների ձեռքբերման համար առանցքային դերակատարում ունի: Արձանագրեցինք , որ հենց մայրենիի դասաժամն է նպաստում խոսքային մշակույթի զարգացմանը, եթե դասը անցնում է արդյունավետ, բնական ու հագեցած է ակտիվ բաղադրիչներով:

Հարկավոր է ստեղծել բոլոր նախադրյալները, որպեսզի սովորողի գիտելիքների և կարողություններ ձեռքբերման ընթացքը լինի բնականոն և արգասաբեր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
2. https://escs.am/files/files/2020-07-17/8e86258106381f2fda04290ffa268a94.pdf «Մայրենի ծրագիր նահանրակրթական դպրոցի 1-6-րդ դասարանների համար»:
3. http://armedin.am/wp-content/uploads/ «Ակտիվ, ինտերակտիվ ուսուցման մեթոդներ»:
4. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 ՀՀ Կառավարության որոշում:
5. Ա. Տեր-Գրիգորյան, Հայոցլեզվիմեթոդիկա, Երևան, 1980:
6. Ձ. Գյուլամիրյան, Մայրենիիուսուցմանմեթոդիկա, Երևան 2018, էջ 21:
7. «Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում», ռեսուրսգրքույկ, Երևան, 2020:
8. Л. С. Выготский «Мышление и речь», Москва 1934, стр 31:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԿԱՐԴՈՒՄ Է ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԸ
https://youtu.be/7c2EEpFpduA